

Մէկ չըլլատրիկ էզար, թիւ թռաւ. Սիւղնին էլ ականջ պընջ կտրից. Չարեսագին, Կուզբագին փախան, ջուհաբ¹⁾ տարան Մըս-րամելիքին: Էտունք փախան, կեացին, Դաւիթ կինաց զմարաքի տիւռ էբաց, աղջկնիր, կնքտիր տիւս էխան: Աղջկնիր կնքտիր օրհնիւթքեով կեացին:

Կուզբագին ջուհաբ տարաւ Մսրամելիքին, էսաց. — Մէկ տղայ իլի Խաւոց ազգին, զմի ճրագ ընցըցուց:

— Աբա ի՞նչ էնինք:

Էն եանէն ասին. — Դաւիթն ի, բաշխայ²⁾ մարդ չի, մէկ ժամ շինի Սասմայ սարը մէջ, քեառսուն տէրտէր, քեառսուն վարդապիտ, քեառսուն սարկաւագ տրի մեանչ վեանքին:

Էսաց. — Կուզբագին, քիւ թագարիք տիս, տ'երթաս Սասմայ սար, Մարութայ բանձր Աստուարածին թալնիս, աւիրիս, կեաս:

Կուզբագին էլաւ, իրիք խարիր մարդ առից, բիրագի մէկ տարուան պսակուած տղայ, ժողվից, էլաւ, կինաց վեանքի վերայ*):

Ճարպախար-Քեամին իլի սար, կինաց ի նէճիր. Քաթմանայ-Բիւղէն էլ դարձի, քեաղաք էկի, վեանք մշմուր³⁾ մնացի:

Կուզբագին քեշից, կինաց վեար վեանքին: Էզար, սպանից քեառսուն տէրտէր, քեառսուն վարդապիտ, քեառսունից մէկն պակաս սարկաւագ, — մէկ սարկաւագ էլ զինք մեանչ շուրիրուն պակսից, չ'տեսան**):

Կուզբագին զըմէն էլ սպանից, զվեանք քակից, զըմէն սւի-

1) Լուր: 2) Ուրիշ, տարբեր: 3) Անտէր:

*) Ա. վարիանտով այժմ գալիս է Քեոսէն:

***) Ա. և Բ. վարիանտներով Մսրամելիքի մարդիկը ոչ թէ Բաթմանայ-Բիւղի և Ճարպախար-Քեամու բացակայութեան ժամանակ են յարձակուում, այլ խորամանկութեամբ իրանց սպանած արջի ականջները ցոյց տալով երկու «փէրիզ»-ներին՝ Տաւատացում են, թէ Դաւիթն սպանել էն: Երկու փէրիզները իրենց տիրոջ մահը լսելով այլ ևս վանքը չեն պաշտպանուէ: